

վորականին պէս ես զինուած էի։ Մի բլրակի վրայ կանգնած ժամանակ մի ձիաւոր տեսայ, որ մի կին առեւանգած՝ ձին թունդ քշում էր բլրակի շուրջը պտտուող ձորակի միջով։ Ինձ տեսնելուն պէս խեղճ առեւանգուած կինը մի սուր ձիւ արձակեց և իր բազուկները մեկնեց դէպի ինձ։

«Ես անմիջապէս ցած վազեցի դէպի ձորակի այն կողմը, որտեղից դեռ ձիաւորը պիտի անցնէր։ Կանգնիր, գողացի ես, և սուրս մերկացնելով՝ կանգնեցի ձորակի մէջ տեղում, ձիաւորի ճանապարհը կտրելու համար։

«Ձիաւորն էլ սուր ու հրացան ունէր. բայց որովհետեւ նա հազիւ կարողանում էր առեւանգուած կնոջը պինդ պահել իր ձիու վրայ, ուստի չկարողացաւ օգտուել իր զէնքերից։ Նա սաստիկ գրգռեց ձիուն իմ վրայից թոցնելու նպատակով, բայց ես թուրս այնպէս քաշեցի, որ ձին մի ուժգին ցնցումով յետ ընկրկեց և զարհուրած կինը վայր ընկաւ նրա վրայից։

«Ձիաւորն այժմ ազատ զգալով իրան՝ փորձեց գործածել իր հրացանը, բայց նա տեսնելով, որ իմ արդէն ուղղուած էր դէպի իրան, խոհեմութիւն համարեց հեռանալ, գնալ։

«Ես իսկոյն վազեցի ընկած կնոջ օգնութեանը։ Նրա ըզգեստից ես իմացայ, որ նա մի հայուհի էր։ Նրա մարմինը սաստիկ ծեծուած էր և ինքը ուշաթափուած։ Նրա երեսի կէսը քթակալով ծածկուած էր։ Ես իսկոյն ետ քաշեցի քթակալը որպէսզի նա թարմ օդ ներշնէր։ Օ՛, նա գեղեցիկ էր. գիւթիչ էր նրա դէմքը։

«Այդ գեղանի արարածը, որին ես վերցրի բազուկներէս մէջ, մօտաւորապէս 15 տարեկան մի աղջիկ էր։ Օ՛, ես երբեք չեմ կարող մոռանալ այն սիրոյ հրճուանքի և միևնոյն ժամանակ երկիւղի ցնցումը, որ ես զգացի երբ ես հիացմամբ նայում էի նրա երեսին։ Մինչդեռ նրա գլխի վերև խոնարհուած նայում էի նրան, մի զգացում եկաւ վրաս որ բոլորովին նոր էր ինձ համար, և մոռանալով ամեն բան, ամեն մտածմունք, ես անձատուր եղայ սիրոյ առաջին կրթի բոլոր սաստկութեանը։ Ինձ թւում էր որ ես յաւիտեան դաժնուած կը մնայի այդ տեղում, եթէ նա իր աչքերը չբանար և կեանքի նշոյններ ցոյց չտար։

«Նրա առաջին բառերը, ուղղակի մտան հոգուս խորքերը բայց երբ որ նա քիչ ուշքի եկաւ և տեսաւ թէ ինքը որտեղ է և ինչ անծանօթ մարդու ձեռքումն է, նա սկսեց անպէս լալ ու ողբալ, ուր ես շփոթուեցի, տարակուսած մնացի։ Նա քիչ ժամանակից յետոյ սթափուեց, և երբ նա հասկացաւ որ ես իր հայրենակիցն և կրօնակիցն էի, և որ ես էի որ իրեն ա-

զատել էի, նա քիչ հանգստացաւ և սկսեց տարբեր զգացումով նայել վրաս:

«Բայց մէկ բանի համար նա շատ վշտացաւ և յանդիմանեց ինձ. այդ նրա համար էր որ ես յետ էի քաշել նրա դէմքի կէսը ծածկող քթակալը: Դա մի աններելի յանցանք էր որ ես գործել էի: Դա մի իրաւունք էր, որ միմիայն իր ամուսնուն էր վերապահուած: Դա անարատութեան, պարկեշտութեան, առաքինութեան և պատուի մի նշան էր, որ անքան սրբազան է մի հայ կոնջ համար: Ուրեմն ես անարգել էի այդ նշանը, և արժանի էի յանդիմանուելու: Ես տեսել էի նրա երեսը, որ չպիտի տեսնէի:

«Ես աշխատեցի համոզել նրան որ եթէ քթակալը յետ քաշած չլինէի, նա կը խեղդուէր. բայց ի զո՛ւր էին իմ խօսքերը: Ո՛չ մի խօսք նրան չկարողացաւ մխիթարել: Նա միայն համոզուած էր, իբր թէ ինքը մի անարգուած, մի կորսուած կին էր դարձել:

«Վերջապէս նա մի փոքր հանգստացաւ երբ նրան ասացի, «Եթէ դու քեզ անարգուած ես համարում, ո՞նք բացի ինձանից չէ տեսել քո անարգուելը: Ես երդում եմ Սուրբ Խաչով որ այդ հանգամանքը խիստ գաղտնի կը մնայ իմ սրբատում»:

«Ես խնդրեցի նրանից պատմել ինձ իր արկածը և ասել ինձ թէ ո՞վ էր այն ձիաւորը, որից ես բախտ ունեցայ ազատելու իրան:

— Այդ մարդու մասին, ասաց նա, ես միայն գիտեմ որ նա պարսիկ է: Իմ կեանքում, ես նրան չէի տեսել, և ինչքան ես հասկանում եմ, նրա՝ ինձ առեւանգելու նպատակը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ինձ ծախել իբրեւ մի գերունի: Մի քանի օր առաջ, մի ընդհարում տեղի ունեցաւ մի խումբ պարսիկ հեծելազօրքի և վրացիների մէջ: Վերջինները յետ քշուեցին. նրանցից մի քանիսը գերի տարուեցին Երևան: Այդ ընդհարումից մի քանի օր առաջ, պարսիկ զինուորները մեր գիւղումն էին, և ես կարծում եմ, որ ինձ առեւանգողը հէնց այնտեղ էր գծել իր ծրագիրը որ փախցնէր ինձ իբրեւ մի վրացի գերունի: Այսպէս եղաւ: Ես մի առաւօտ կուժը վերցնելով՝ գնացի աղբիւրը ջուր բերելու: Մինչդեռ կուժս լցնում էի, այդ պարսիկը յանկարծ մի պատի հոտից դուրս եկաւ, և իր մերկացրած սուրը ձեռքին՝ սպառնաց սպանել ինձ եթէ ես առանց ձայն հանելու չհետեւէի նրան: Նա ինձ բռնեց, և իր ձիու վրայ դնելով՝ ինքն էլ հեծաւ ու մտրակեց կենդանուն: Հէնց այդ ընթացքին մեր գիւղի աղջիկները գալիս էին դէպի աղբիւրը. բայց ինչ էին կարող նրանք անել: Իմ փրկուելու միակ յոյսը այն էր, որ նը-

ըրանք անմիջապէս լուր կը տարածէին մեր գիւղում, և անտա-
րակոյս հայրս, եղբայրներս և ազգականներս կը գային ինձ
գտնելու: Մի քանի ըոպէից յետոյ, մենք արդէն շատ հեռու
էինք գիւղից: Մենք անցանք բլուրներից, ձորերից և երկրի
այն կողմերից որտեղից ոչ մի ճանապարհորդ դեռ չէր
անցել: Մենք այդպէս գնում էինք, երբ քեզ տեսնելով բլուրի
վրայ կանգնած՝ սիրտ առի և սկսեցի աղաղակել, թէ և պարսի-
կը սպառնում էր ինձ սպանել ձայն հանելուս համար: Ե՛ր, մը-
նացածը դուք գիտէք:

«Նա հազիւ վերջացրել էր իր խօսքը, երբ հեռուից տես-
նուեցին մի խումբ մարդիկ, որոնցից մէկը ձիաւոր էր: Նրանք
յառաջ էին գալիս դէպի մեզ: Երբ նրանք մեզ լաւ մօտեցան,
ազատուած կինը ճանաչեց նրանց: Օ՛, ինչքան ուրախացաւ նա:

— Նրանք իմ հայրս ու եղբայրներս են, ասաց նա: Ահա
Յովհաննէս եղբայրս, էն մէկն էլ Յակովբն է, էն միւսն էլ Յա-
րութիւնն է, էն միւսն էլ հօրեղբայրս է:

«Նա յառաջ վազեց և ընկաւ իր հօր գիրկը որ արդէն ի-
ջել էր ձիուց: Նրանք համբուրուեցին, լացին, ուրախացան:
Յետոյ նա համբուրեց իր եղբայրներին և հօրեղբօրը: Օ՛, ան-
նկարագրելի է նրանց ուրախութիւնը: Ես մի ըոպէ սաստիկ
երկիւղի մէջ ընկայ, որովհետեւ մտքովս անցաւ որ գուցէ նը-
րանցից մէկը նրա սիրականը լինի և ով գիտէ, գուցէ նա իմ
վրայ կը կասկածի... Բայց ի գուր էր իմ կարծիքը, իմ վախը.
այդ մարդիկը բոլորն էլ նրա ընտանիքն էին:

«Նրանք պատմեցին թէ իրանք ինչպէս էին հետեւել ի-
րանց աղջկան մինչև հասել էին այդ տեղը: Նա փառք տուեց
Աստծուն որ այժմ ազատուել էր, և մի քիչ դանդաղելուց յե-
տոյ, նա մատնացոյց անելով ինձ՝ նրանց ասաց.

— Ահա սա է իմ ազատիչը:

«Բոլորի աչքերը ուղղուեցին ինձ վրայ:

— Ո՞ւմ որդին ես դու, հարցրեց նրա հայրը:

— Ես խոջա Պետրոսի որդին եմ, պատասխանեցի ես, որ
Ղամիշլու գիւղի ունն է:

— Ա՛հ, նա իմ բարեկամն ու դրացին է, ասաց նա. բայց
քեզ չեմ ճանաչում: Ինձ թւում է, որ դու խոջա Պետրոսի այն
որդին ես, որ ուղարկուել էր Էջմիածին, ուսում ստանալու, և
այժմ եկել ես քո ընտանիքին օգնելու:

— Այո, հասկացածդ ուղիղ է. ես հէնց նա եմ:

— Բարով ես եկել, հազար բարով: Աստուած քեզ պահէ,
երկան ապրիս: Դու մեր աղջկան փրկել ես, և մենք մինչ յա-
ւիտեան պարտական ենք քեզ: Դու մեզ հետ պիտի գաս մեր

տունը և մեզ հիւր լինես, մեր ուրախութիւնը անբացատրելի է: Մենք մի լաւ գառ կը մորթենք և ուրախութիւն կ'անենք: Մենք քեզ մեր գլխի վրայ կը տանենք: Մենք քո ոտները կը համբուրենք: Դու փրկել ես մեր Մարիամին, դու ազատիչ հրեշտակ ես դարձել նրա համար, և դրա համար մենք երախտապարտ ենք քեզ:

«Նրա հայրը, հօրեղբայրը և եղբայրները կրկին և կրկին, անգամ շնորհակալ եղան ինձանից, և բոլորն էլ միասին այնքան խնդրեցին ինձանից, իրանց գիւղը գնալ, որ ես ստիպուցի ընդունել նրանց հրաւերը, և միասին ճանապարհուեցինք դէպի տունը:

«Նրբ որ մօտենում էինք Մարիամի գիւղին, (այդպէս պիտի անուանեմ այդ գիւղին) մենք տեսանք որ բոլոր բնակիչները, յատկապէս կանայք և երեխաներ, անհամբեր սպասում էին մեզ: Օ՛, երբ նրանք Մարիամին տեսան, նրանց ուրախութեանն էլ չափ չկար:

«Նրա ազատման լուրը շուտով տարածուեց ամբողջ գիւղում, թէ և այնպիսի չափազանցութիւններով որ պատմութիւնը միանգամայն փոխուեց: Շատերն ասում էին, որ իբր թէ Մարիամին առեւանգողը մի հսկայ է եղել, որ ունեցել է երկաթէ գլուխ, երկաթէ ճանկեր և պողպատէ ոտներ, մէջքը ծածկուած ձկան թեփերով և հեծած մի գազանի վրայ, որ գետինը պատռելով վազում էր, և վաղելու ժամանակ թնդանօթների ձայներ էր հանում: Մի քանիսն էլ, սրա վրայ աւելացրին այն թէ՛ յանկարծ մի հերկարար տղայի կերպարանք ունեցող մի հրեշտակ ամպերի մէջ գտնուող մի բարձր լեռան վրայից իջել էր, և իր ձեռքի հրեղէն սրովը այնպէս զարհուրեցրել էր հսկայի ձիուն, որ նա ցնցուկելով վայր էր ձգել Մարիամին: Յետոյ հրեշտակը մօխիւր էր դարձրել հսկային ու նրա ձիուն, որովհետեւ հէնց որ Մարիամը ուշքի էր եկել՝ ոչ ձի էր տեսել և ոչ հսկայ:

«Գիւղումն ինձ մատնանիշ էին անում իբրեւ այդ հերկարար տղային, և բոլորն էլ զարմանքով էին նայում վրաս: Մօտ էր որ գիւղացիք ինձ պաշտէին որպէս մի սուրբ էակի, բայց մի խաշնարած տղայ, որին ես յաճախ տեսել էի՝ ճանաչեց ինձ և գիւղացիներին ասաց:

— Օ՛հ, նա հրեշտակ չէ. նա Յովսէփն է. ես ճանաչում եմ նրան. նա Ղամիշլու գիւղի ոէս Պետրոսի որդին է:

«Թէպէտ այս տղան ինձ ճանաչելով՝ մեծ հարուած տուեց ինձ, այնուամենայնիւ գիւղումն ամեն մարդ մեծ յարգանքով

էր վերաբերուում դէպի ինձ: Վերջապէս, ամբողջ այդ ժամանակը՝ սէրը խոր արմատ էր ձգում սրտիս մէջ:

«Ես այլևս Մարիամին երես-բաց չտեսայ: Նրա դէմքը միշտ քողով ծածկուած էր: Ա՛խ, երջանիկ էր կեանքիս այն բոլորէն երբ առաջին անգամ նրա երեսը տեսայ, և հէնց այդ երջանիկ բոլորէն էլ կնքեց իմ ապագայ ճակատագիրը:

«Ո՛հ, ես ինձ ասացի, ոչ մի բան չէ կարող ինձ բաժանել այդ հրաշագեղ, նազելի կոյսից: Այժմեանից մեր երկուսիս ճակատագիրն էլ մէկ է: Երկինքը հրաշքով միացրել է մեզ, և ոչ մի բան չէ կարող մեզ բաժանել: Այո, նա իմս է, և իմս պիտի լինի, թէկուզ հարկ լինի՝ պարսկական բռնութիւն գործ կը դնեմ և տէր կը դառնամ նրան:

«Մարիամն ու ես երբեմն հանդիպում էինք միմեանց, և թէպէտ շատ քիչ խօսքեր էինք փոխանակում, սակայն մեր աչքերը աւելի քան պերճախօս էին—նրանք շատ բաներ էին ասում միմեանց: Շուտով ես զգացի և համոզուեցի որ նա—ո՛վ երջանկութիւն, փոխադարձաբար սիրում էր ինձ:

«Մարիամի հօր խոստացած գառը մորթուեց, մեծ ուրախութիւն կատարուեց, և միւս օրը, ես վերադարձայ մեր տունը:

«Սիրտս զեղուն էր այն այնպիսի սիրով, որ ես ոչ մի ուրիշ բանի վրայ չէի մտածում: Ես, վերջապէս, վճռեցի իմ ծնողներիս ծանօթացնել սրտիս դրութեան հետ:

—Ես այժմ չափահաս եմ, ասացի ծնողներիս, և կարող եմ ինքնագլուխ մտածել ու գործել: Ծնորհակալութիւն Աստուծուն և ձեզ. ես իմ բազումների ուժով կարող եմ իմ ապրուստը հայթայթել: Ես ցանկանում եմ ամուսնանալ, և Նախախնամութիւնը արդէն ճանապարհը բաց է արել ինձ համար:

«Ես խնդրեցի ծնողներիցս շուտով Մարիամի ծնողների հետ տեսնուել և նրա ձեռքը խնդրել ինձ համար: Հայրս ասաց.

—Որդիս, ես դէմ չեմ քո ամուսնանալուն. բայց մի բոլոր մտածիր թէ՛ այնպիսի մի նեղ ժամանակում որչա՞փ դժուար կը լինի հարսանիք գլուխ բերել: Դու գիտես, որ մինք այժմ աղքատ ենք և չենք կարող մի հարսանիքի ծախք անել: Հարկաւոր է գնել նոր զգեստներ, մատանի, մոմ, քաղցրաւենիք, ծիրանի քօղ, անկողին կայլն. բացի դրանցից՝ վճարել երգիչներին և զուռնաչիներին, և մի մեծ խնճոյք սարքել: Բայց արդեօք որ-տե՞ղից բերենք այնքան փող, որ կարողանանք այդ բոլորը անել:

—Սիրելի հայր, ճշմարիտ է որ փող է հարկաւոր այդ

բաների համար, ասացի ես: Դիտեմ որ առանց փողի՝ հարսանիք չի լինի. բայց ես կարող եմ պարտք վերցնել ինչքան փող որ մեզ հարկաւոր լինի: Երեւանում և Էջմիածնում ես բարեկամներ ունեմ, որոնք, ես կարծում եմ կարող են ինձ փող տալ ինչքան որ ուզեմ: Այո, ես պարտք կը վերցնեմ, և յետոյ անքան կ'աշխատեմ, անքան խնայողութիւն կ'անեմ մինչև կարողանամ շուտով ազատուել պարտքիցս:

«Վերջապէս, ես այնքան համոզեցուցի խօսքեր ասացի ծնողներիս, որ նրանք ընդունեցին կատարել իմ ցանկութիւնը, և խոստացան շուտով տեսնուել Մարիամի ծնողների հետ: Միւսօրն ժամանակ, ես համարեա ամեն օր մի պատրուակով գնում էի հարսնացուիս տունը և գրեթէ ամբողջ օրը մնում էի այնտեղ: Ես մի քանի անգամներ միջոց ունեցայ Մարիամին յայտնելու իմ դիտաւորութիւնը, որպէսզի նա էլ, իր ծնողներն էլ յանկարծակիի չբռնուէին:

«Մի քանի օրից յետոյ, հայրս ու մեր ազգականներից մի քանիսը գնացին Մարիամանց տունը, որտեղ նրանք սիրալիր ընդունելութիւն դտան: Խնդրի վրայ բաւական խօսելուց և մի քանի բաժակ օղի խմելուց յետոյ, երկու կողմից էլ համաձայնութեան եկան, որ անյապաղ՝ հարսանիքի պատրաստութիւններն սկսէր:

«Երեք օր սրանից յետոյ, մայրս, հօրեղբայրս, ես և մի քանի ծեր կանայք, միասին գնացին Գիւլբու (Մարիամի գիւղը) իմ նշանադրութիւնը կատարելու, և հարսանեկան պայմաններ փակելու: Մենք աւելի սիրալիր ընդունելութիւն գտանք, քան հայրս ու իր հետ գնացողները:

«Մայրս իմ կողմից առաջարկեց երկու ձեռք զգեստ և մի քանի թաշկենակներ տալ հարսին: Նա խոստացաւ տալ նաև 50 պիաստր, հարսի մանր ծախքերի համար, և մի շղթայ որից կախուած կը լինէր թուամանանց մէկ ոսկի:

«Հարսնացուիս ծնողներն ընդունեցին այս պայմանները, սակայն նրանց ազգականներից մէկը՝ մի ծեր կին, որ մի ժամանակ մի պարսիկ ընտանիքում ծառայել էր՝ մի բան պահանջեց, որ երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ: Նա պահանջում էր, որ ես մի բան էլ խոստանայի շիրքահայի համար (կաթնի փող), ինչպէս սովորութիւն է տալ ամբողջ Պարսկաստանում: Մերոնք առարկեցին թէ՛ այդ սովորութիւնն երբէք գոյութիւն չունի հայերիս մէջ. սակայն հարսնացուիս կողմից պնդում էին, որ անպատճառ պիտի տրուի: Վիճաբանութիւնը այնքան սաստկացաւ, որ ես պարտաւորուեցի մօրս համոզել որ չերկարացնէր բանը, այլ տասը պիաստր էլ արեւացնէր յիսունի վը-

բայ, որ արդէն խոստացել էր: Մայրս կատարեց կամքս և վիճարանութեանը վերջ տուեց: Պայմանները փակուելուց յետոյ պատրաստուեցին նշանադրութիւնս կատարելու: Ինձ խիստ կերպով պատւիրուեց որ արարողութեան ժամանակ երբէք չըծիծաղեմ, մինչև անգամ չժպտամ: Որովհետև, ասում էին, ծիծաղը որ այդպիսի մի ժամանակ անքաղաքավարութեան նշան է համարուում, կարող է չարիք բերել ամուսնացողների վրայ:

«Մայրս ու հարսնացուիս մայրը, նստան յատակի վրայ միմեանց դիմաց: Մօրս աջ ու ձախ կողմում նստան մեզ հետ եկած երկու ծեր կիները, իսկ հարսնացուիս մօր կողքին էլ՝ նրա երկու ծեր ազգականները: Յետոյ երբ Մարիամը ներս եկաւ, մայրս մի մատանի դրեց նրա մատը—թէև, ափսոս որ մատանին պղնձէ էր: Դրանից յետոյ քահանան իր ձեռքն առնելով մի բաժակ գինի՝ օրհնեց, և առաջարկեց ինձ և Մարիամին խմել նրանից: Մենք խմեցինք, և քահանան աղօթք կարդալով և մեզ օրհնելով՝ յայտնեց որ մենք այն բոլորից նշանուած հարսնացու և փեսայացու էինք: Նա շնորհաւորեց մեզ, շնորհաւորեցին և բոլոր մեր ազգականները, որ ներկայ էին:

«Մենք վերադարձանք տուն և սկսեցինք հարսանիքի պատրաստութիւններ տեսնել: Մինչդեռ ես ու մայրս խօսում էինք թէ ինչքան փող էր հարկաւոր ծախքերի համար, հայրս եկաւ և մի քսակ փող տալով ինձ՝ ասաց:

—Յովսէփ, որդիս առ քեզ փող. դա տասը թուման է. դրանով դու կարող կը լինիս հարսիդ համար զգեստ պատրաստել:

«Քսակը հօրիցս ստանալով, չոգեցի նրա առջև, համբուրեցի նրա ձեռքը և խնդրեցի նրա հայրական օրհնութիւնը: Հօրեղբայրս էլ ողևորուելով՝ ասաց:

—Միբիլի Յովսէփ, դու գիտես որ մեր եկեղեցին աղքատ է, և բնականաբար նրա քահանան էլ աղքատ կը լինի. այնուամենայնիւ ես քեզ ընծայում 20 արծաթ արծաթի. ստացիւ և դրանով մոմ գնիր հարսանիքիդ համար:

«Մեր ընտանիքի բոլոր անդամներն էլ պարգևներ տուին՝ ինձ, այնպէս որ քսակս բաւական լցուելով՝ ես այլևս չպարտաւորուեցի փող պարտք անել:

«Ես անհամբեր էի շուտով Երևան գնալու և այնտեղից զգեստներ գնելու հարսի համար. բայց որովհետև ես ոչ լաւ կտորներ էի կարող ճանաչել, և ոչ էլ նրանց արժէքը գիտէի, ուստի յարմար դատուեց, որ մայրս էլ ինձ հետ գար: Վերջապէս մայրս ու ես ճանապարհ ընկանք. նա հեծած՝ ես ոտքով, հրացանս ուսիս և սուրս մէջքիս: Մեր գիւղի բնակիչների կէ-

սը դուրս եկաւ մեր ետեւից ճանապարհ դնելու և յաջողութիւն մաղթելու մեզ:

«Հասնելով Ապարանի բարձրութիւններէ վրայ, մեր աչքի առաջ երևացին բազմաթիւ սպիտակ վրաններ, որոնցից մէկը շատ փառաւոր կերպով զարդարուած էր: Մեզ հանդիպեց մի ձիաւոր, որը յայտնեց մեզ որ այդ վրանները, Երեւանի Մարդարի բանակն էին կազմում, և թէ Սարգարն իջել էլ այդ տեղում դիտելու ռուսների և վրացիների շարժումները, որոնք, կարծւում էր թէ առաջ էին գալիս յարձակուելու Պարսկաստանի վրայ: Զիաւորի տուած այս լուրը մեզ այնքան երկիւղի մէջ ձգեց, որ մայրս առաջարկեց ինձ վերադառնալ տուն և հարսանիքը յետաձգել: Մօրս առաջարկին ես խուլ ականջ դարձրի և համոզեցի նրան շտապել դէպի Երեւան մեր գործը շուտով վերջ տալու և իսկոյն վերադառնալու: Այսպէս մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Առաջին օրը մենք այնքան գնացինք, որ բաւական մօտեցանք Երեւանին, որտեղի տներից բարձրացող ծուխը մենք կարողանում էինք տեսնել:

Մենք իջանք մի գահավէժ ժայռի տակ, որտեղ երևում էր պատկառելի Մասիսը, որին նայելիս մենք խաչակնքեցինք մեզ: Այն Թափառական ցեղերը, որոնց մէկի կամ միւսի վրանում մենք մտածել էինք գիշերել, մեր ճանապարհից հեռացել, գընացել էին ուրիշ կողմեր. ուստի մենք պարտաւորուած մեզ Աստծուն յանձնելով՝ գիշերեցինք ժայռի տակին:

Միւս առաւօտը արեւածագից քիչ առաջ մենք ճանապարհուեցինք և վերջապէս անվտանգ հասանք Երեւան: Մօրս ազգականները սիրով ընդունեցին մեզ, և միւս օրը մօրս հետ միասին բազար գնացինք մեր ուզեցած բաները գնելու համար: Ես էլ ինձ համար մենակ պտտեցի բոլոր բազարները և ուշադրութեամբ ականջ էի դնում զանազան տեղերում խմբուած մարդկանց խօսակցութիւններին: Բազարներում այլ և այլ լուրեր էր տարածուել սարգարի՝ թշնամիների դէմ բռնած ընթացքի մասին:

«Պարզ է, որ շուտով մի թունդ պատերազմ պիտի տեղի ունենար. Երեւանում, սովորականից դուրս շատ աւելի մեծ թուով մարդիկ էիր գործում գինարանում ու վառօտարանում որտեղ պատրաստւում էին այնպիսի կործանիչ գործիքներ, որոնց նմանը դեռ գոյութիւն չունէր Պարսկաստանում, և որոնց շինելը, պարսիկները սովորել էին զինուորութիւնից փախած մի քանի ռուսներից: Ես այնքան զբաղուած էի իմ մտքով դանձնական գործերով, որ այդ լուրերը, այդ պատրաստութիւնները ոչ մի նշանակութիւն չունեցան ինձ համար:

«Ինչ և իցէ մեր գործերը վերջացնելով՝ մենք վերադարձանք դէպի մեր գիւղը իհարկէ, այն ճանապարհով որ ով եկել էինք: Վերադառնալիս, մենք տեսանք որ սարդարի բանակը դեռ նոյն տեղումն էր, որտեղ մենք տեսել էինք գնալիս: Մենք անվտանգ անցանք բանակի մօտից և շարունակեցինք մեր ճանապարհը, մինչև հասանք այն բարձրութեան վրայ՝ որտեղից երևում էր Ղամիշլուն:

«Այստեղ հասած՝ մայրս հեռուից մի վրան տեսնելով՝ վախեցաւ և կանգ առաւ:

—Այդ ի՞նչ է, Յովսէփ, տես, այնտեղ մի վրան կայ:

Ես որ ամբողջ ժամանակ միայն իմ հարսանիքի մասին էի մտածում, ասացի.

—Այո, մայրիկ, ես տեսնում եմ, գուցէ այդ վրանում պատրաստութիւններ են տեսնում մեզ հիւրասիրելու համար:

—Մեզ հիւրասիրելու համար, զարմացմամբ հարցրեց մայրս. խելքդ կորցրե՞լ ես, որդի. գփու՞կ ես: Այդ վրանում կամ ռուսներ, կամ պարսիկներ կան: Ես այնքան հաստատ գիտեմ այդ, ինչքան հաստատ գիտեմ որ ես քրիստոնեայ եմ: Վայ մեզ որդիս, մենք վատ տեղում ենք. մենք վտանգի մէջ ենք:

«Ահով ու մտահոգութեամբ մենք շտապեցինք դէպի մեր գիւղը, որին երբ մօտեցանք, տեսանք որ մօրս կասկածներն ու վախը իզուր, անհիմն չէին: Մի վաշտ ռուս զինուորներ արդէն տեղաւորել էին մեր գիւղում: Նրանց հրամանատարներն էլ իջել մեր տնում:

«Մեր դրութիւնը վատ էր: Ես սաստիկ տխրեցի, երբ մտածեցի որ մեր գիւղի այս դրութիւնը պատճառ պիտի դառնար յետաձգելու իմ ամուսնութիւնը, և այն էլ ով գիտէ մինչև երբ—մինչև այն ժամանակ՝ երբ մենք բոլորովին կը կործանուենք: Այս մտածմունքը խիստ ճնշող էր. սիրտս պայթում էր վախից, կասկածից և տրտմութիւնից: Ես շտապեցի դէպի Գիւլբու գիւղը, գտնէ այնտեղ իմ բարեկամներից միւթթարութիւն գտնելու:

«Գիւլբու գիւղում դեռ ոչինչ խռովութիւն չկար. բայց երբ գիւղացիները լսեցին թէ մեր գիւղը ինչ դրութեան մէջ է, սկսեցին վախենալ ու տարակուսել: Ես հանդիպեցի իմ չքաւ Մարիամին, բայց մեր երկրի սովորութիւնը թոյլ չտուեց ինձ խօսակցել նրա հետ: Սակայն սէրը կարող է ամեն բան անել: Մենք միշտ գտանք երկար խօսակցելու: Այո, մենք խօսեցինք միմիանց հետ, միմիանց խոստացանք կայուն մնալ մինչև մահ, և Սուլբ խաչով երդուեցինք, որ ինչ էլ մեզ պա-

տահելու լինէր, ինչքան էլ մենք թշուառանայինք՝ դարձեալ պիտի ամուսնանայինք միմեանց հետ:

Շինչեիցէ, մի-երկու շաբաթ անցաւ, և ճիշդ բան չպատահեց մեզ: Մենք բարեկամացանք մեր հիւր ռուս ղինուորնե-րի հետ, և որովհետեւ նրանք ճշ մի մնաս չէին տալիս մեզ, մենք աւելի և աւելի մօտեցանք նրանց: Նրանք էլ մեզ պէս քրիստոնէականեր էին. նրանք էլ խաչակնքում էին իրանց, ա-ղօթում էին մեր եկեղեցում, խողի միս էին ուտում, գինի էին խմում: Նրանց հրամանատարը մի լաւ, մի խելօք, մի ար-ժանաւոր և շատ համակրելի անձնաւորութիւն էր, թէպէտ գէժքով շատ այլանդակ: Նա այնպէս անկեղծութեամբ և հա-մակրանքով էր վերաբերում դէպի գիւղացիներս, որ մենք բոլորովին գոհ եղանք նրանից: Նա շատ հետաքրքիր էր ծա-նօթանալու մեր սովորութիւնների, ձևերի, վարքի ու բարքի, մի խօսքով՝ մեր կեանքի հետ, և այդ պատճառով՝ նա միշտ քաջալերում էր մեզ խօսակցելու իր հետ:

Շնրա՛ մեզ տուած քաջալերութիւնիցն օգտուելով, ես մի օր նրա հետ խօսեցի իմ ամուսնութեան մասին: Նա այնքան հետաքրքրուեց ինձանով, որ նա խոստացաւ մինչև մահ իմ բարեկամը լինել:

— Բայց ինչո՞ւ չէ կարելի որ քո հարսանիքը հէնց այս օրերս տեղի ունենայ, հարցրեց նա: Ես չեմ կարծում որ որևէ արգելք լինի: Դանի որ մենք այստեղ ենք, կը պաշտպանենք ձեզ, և ես՝ իմ կարողութեան չափով նիւթապէս կ'օգնեմ քեզ: Պարսիկների կողմից երբէք շարժուելու ձայն կամ, նշան չկայ, և մենք պիտի այստեղ սպասենք մինչև որ թարմ ուժեր հասնեն, յետոյ յառաջ արշաւենք: Ուստի, քեզ բաւա-կան ժամանակ կայ խաղաղութեամբ և ուրախութեամբ ամուս-նանալու:

Շնա խոստացաւ մի ընծայ էլ տալ հարսիս, և հարսանի-քի օրն էլ իր ձին իմ տրամադրութեան տակ դնել: Նա այն-քան քաջալերեց ինձ, որ մենք կարգադրեցինք հարսանիքը շու-տով գլուխ բերել:

Շնթէ այս երիտասարդ զօրապետի տեղ մի ուրիշը լինէր, որ ինձ այսքան քաջալերէր, ինձ, այսքան համակրէր, ինձանով այսքան հետաքրքրուէր՝ ես, շատ հաւանականօրէն, կը կաս-կածէի որ նա անձնական շահ կամ յետին մտքեր ունէր. սա-կայն այս մարդը այնքան տգեղ էր, որ ես վստահ էի, Մա-րիամը աւելի շուտ կը սիրահարուէր մի կապիկի վրայ քան նրա: Ո՛ր, մտածեցի ես, վստահ եմ որ Մարիամը աւելի ու-րախ կը լինի սիրել իրան առևանգող պարսիկին, քան այսպէս

մի տգեղ մարդու՝ որի նայելը զգուանք է առաջ բերում»:

«Վերջապէս, փարատելով ամեն կասկած՝ ես սկսեցի զբաղուել իմ հարսանիքիս պատրաստութիւններով:

«Հասաւ այն օրը, այն աշնան երջանիկ օրը որին ես այնքան անձկութեամբ ու անհամբերութեամբ սպասել էի: Այդ օրը առաւօտը շատ վաղ, մենք—բոլոր մեր ընտանիքը, զարթեցինք և սկսեցինք ուրախ սրտով զբաղուել: Եղանակը պարզ էր, բայց տօթ: Մի քանի օրերից ի վեր փոթորիկի նշաններ էին երևացել, և պարզ էր որ շուտով փոթորիկ պիտի լինէր և յորդանձրէ գար: Ինչեւիցէ, այդ օրը իմ բարեկամ ռուս զօրապետը իր ձին փոխ տուեց ինձ, և ես որքան կարող էի՝ լաւ զարդարեցի նրան: Յետոյ ես ինքս զարդարուեցի մի ձեռք բոլորովին նոր զգեստով, արծաթէ զօտիով, մի զոյգ դաշոյնով և փամփուշտներով:

«Մեր բոլոր ազգականների, ռուս զօրապետի և նրա հետ մեր տունն եկած մի քանի զինուորների ուղեկցութեամբ՝ մենք մի փառաւոր թափօր կազմեցինք և առաջ գնացինք: Հասանք հարսնաց տան դուռը, որտեղ մենք սիրալիւր ընդունելութիւն գտնելով՝ ներս հրաւիրուեցինք *): Վերջապէս, լաւ հիւրասիրուելուց յետոյ, հարսին վերցրինք և ճանապարհուեցինք դէպի մեր գիւղը:

«Մեր գիւղի եկեղեցու դուռը հասնելով, Մարիամն և ես իջանք մեր ձիերից և ներս մտնելով՝ կանգնեցինք սեղանի առաջ, որտեղ քահանան կատարեց մեր պսակի խորհուրդը:

«Մինչև մեր պսակադրութիւնը վերջացաւ, այլևս արևի նշան չկար երկի վրայ: Երկինքը ծածկուել էր սև-սև ամպերով, և հեռուից լսոււմ էին որոտի ձայներ: Շուտով յորդանձրէ սկսեց: Եկեղեցուց տուն դարձանք, և եղանակի այս խառնութեան պատճառով, մեր հիւրերը ընթրիքից յետոյ, շուտ վերադարձան իրանց տները: Եւ ահա, վերջապէս հասաւ այն բաղձալի ժամը, որ ինձ ամենաերջանիկ մարդը պիտի դարձնէր:

«Ա՛խ, արդեօք այստեղ կանգ առնեմ յիշելու այդ գիշերուան բոլոր սոսկումները, թէ՛ լուծ: Բայց ո՛չ կը պատմեմ ձեզ ամեն բան: Չքնանդ, գեղեցիկ էր Մարիամը: Գեղեցիկ էր նա ինչպէս առաւօտեան աստղը, անմեղ էր նա ինչպէս հրեշտակ, նա ինձ սիրում էր ամենասուրբ սիրով: Արդեօք դուք կարող էք երևակայել թէ՛ այն բաղձալի ժամին ինչպէս էի զգում

*) Հեղինակը մանրամասնութեամբ է նկարագրում Յովսէփի թէ՛ նշանադրութիւնը և թէ՛ ամուսնութիւնը, սակայն ես ի նկատի ունենալով, որ այդպիսի մանրամասն նկարագրութիւն արդէն շատ զբոսնում կայ և հայերիս համար մի նոր բան չէ, ուստի չթարգմանեցի նրան: Ե. Թ.

եռ, ես, որ երբեմն կարծում էի թէ անհնար էր մեզ միանալ, կենակցել: Ա՛, ի՜նչ անեմ...

«Բայց որպէսզի կարողանամ ձեզ ուղիղ տպաւորութիւն տալ այն սոսկալի տեսարանի մասին որ ես այժմ պիտի նկարագրեմ ձեզ համար, դուք պիտի նախ հասկանաք, որ Վրաստանի ինչպէս և Հայաստանի այս մասերի գիւղերը, կամ աւելի լաւ ասած՝ տները, մասամբ ստորերկրեայ են, այնպէս որ միջդեռ մի օտարական ման է գալիս մի տան կտուրի վրայ, նա կարծում է թէ հարթ գետնի վրայ է քայլում: Այդպիսի տները լուսաւորւում են կլոր լուսամուտներով, որ բացուած են տանիքների վրայ:

«Այսպիսի տներէց մէկն էր և՛ մեր տունը որտեղ իմ հարսանիքը տեղի ունեցաւ: Իմ հարսնարանն էլ այդպիսի մի լուսամուտ ունէր: Հայերիս մէջ սովորութիւն կայ, որ նախ փեսան է մտնում հարսնարանը, յետոյ հարսը, որը առաջինի կօշիկներն և գուլպաներն հանելով՝ հանգցնում է ճրագը, յետոյ քօղը վերցնելով՝ մտնում են անկողին:

«Դուրսը մռնչում էր քամին, որոտը թնդացնում էր երկինք ու երկիր, կայծակը փայլատակում էր, անձրևը հեղեղի պէս թափւում էր զարհուրելի ձայներ հանելով. կարծես թէ տարրերքի մէջ պատերազմ կար: Ահա, այդ ժամին, ո՛չ, այդ բոլորին իմ նազելի Մարիամը հազիւ թէ հանգցրել էր ճրագը, երբ յանկարծ մեծ դղրդոց լսուեց կտուրի վրայ լուսամուտի մօտ: Դղրդոցին իսկոյն հետևեցին մարդկանց ձայներ, ձիերի տրոփիւններ և յանկարծ մի ծանր բան վայր ընկնելով մեր անկողնու մօտ, կայծակի պէս լոյս փայլատակեց և սենեակը լցուեց ծծումբի հոտով:

«—Այս ի՜նչ շանթ է, գոչեցի ես: Ո՛վ երկինք, պաշտպանիր մեզ: Փախի՛ր հոգիս, փախի՛ր Մարիամ, փախի՛ր...

«Մարսափահար կի՜նս, հազիւ կարողացաւ վերցնել իր չարտաւը և փախաւ դուրս. բայց նրա մի ոտը դեռ դրան սեմի վըրայ էր, որ սենեակումը մի բան ըռնկեց թնդանօթի բոմբիւն հանելով, և ո՛վ յիշողութիւն, կարծես թէ մէկը ինձ փոխադրեց անիծեալների աշխարհը: Ես միայն յիշում եմ որ այդ սիրտ պատուող, կործանիչ ըռնկմանը—ճ, ուումը էր այդ որ տրաքեց, իսկոյն յաջորդեց մեռելային լուութիւն, և ես կիսով չափ թաղուեցի սենեակի առաստաղից թափւող քարերի տակ: Մի քանի բոպէ անզգայ մնալուց յետոյ, ես ուշքի եկայ: Ամուսնութիւնս երազ էր թւում ինձ: Ես լսում էի հրացանի ձայներ սպանւող մարդկանց և կանանց աղաղակներ ու ճիչեր, ձիերի ոտնաձայներ և սրերի շառաչիւններ: «Ո՛վ երկինք, այս ի՜նչ էր

եմ լսում: Գոչեցի ես, այս ի՞նչ է գալիս մեր գլուխներին: Ես դեռ կարծում էի որ մի ուրիշ մոլորակի վրայ էի, և չէի հասկանում ի՞նչ անել: Յանկարծ մի կանացի սուր ճիչ հասաւ աւանջիս: «Մարիամս է դա, գոչեցի ես, ծ, այդ նրա ձայնն էր. այո, նա է. բայց ռիտեղ է նա, ռիտեղ գտնեմ նրան, ուր գընամ որոնելու նրան:

«Նելազարի կատաղութեամբ ես թօթափեցի վրաս թափուած քարերն ու հողը և վեր ցատկելով՝ դուրս վազեցի գորնելու նրան: Չեմ կարող լեզուով պատմել թէ ի՞նչ սոսկալի տեսարան բացուեց առջևս հէնց որ սենակից դուրս գնացի: Առաջին բանը, որ տեսայ ուզարհուրեցի, մի պարսիկ էր որ իր մի ձեռքում սուրը բռնած՝ միւսում մի մարդկային արինաթաթախ գլուխ՝ վազելով անցաւ մօտիցս: Զարհուրելի գիշերուան խաւարը, մերթ ընդ մերթ փարատուում էր կայծակի փայլատակումով, և ես կարողանում էի տեսնել այն սարսափելի ողբերգութիւնը, որ կատարւում էր շուրջս: Կայծակը փայլատակեց, և ես տեսայ պարսիկներ, որոնք մերկացրած սրերով՝ յարձակւում էին անպաշտպան ռուսների վրայ, որոնք զարհարած գուրս էին վազում իրանց անկողինների միջից: Կայծակը փայլատակեց, և ես տեսայ մեր խեղճ գիւղացիներին, որոնք գըժուածի պէս փախչում, գնում էին իրանց հրդեհուած տներից: Այս սոսկալի տեսարանին յաջորդեց մի անեղ դղրդոց, որ ցնցեց ամեն բան: Գիւղի հօտերը դուրս վազեցին գոմերից և վայրենի կատաղութեամբ այս ու այն կողմը վազեցին: Վերջապէս, իմ լեզուով ես չեմ կարող նկարագրել այդ սոսկալի տեսարանը, որ ջնջեց աւերեց մեր ամբողջ գիւղը: Ես միայն փառք, հազար անգամ փառք պիտի տամ իմ Արարչին, որ իր ամենակարող ձեռքով փրկեց, ազատեց ինձ *):

«Ես չէի հասկանում որ կողմը գնալ Մարիամիս գտնելու համար: Ես լսել էի նրա ճիչը բայց ի՞նչպէս հասկանայի թէ նա որ կողմն էր գնացել կամ տարուել: Մի ըոպէ յուսահատութեան մի դող եկաւ վրաս, երբ մտածեցի թէ գուցէ այդ օրհասական ճիչ էր որ նա արձակել էր: Բայց յուսահատութիւնս միայն ըոպէական էր: Ես նորից սիրտ առի, անցայ կոտորածի միջով, վազեցի. կործանուած սենեակս և այնտեղից վերցնելով մի խանձող՝ յետ վազեցի, անցայ սպանողների և սպանուողների միջով, վազեցի, գնացի մինչև գիւղի ծայրը, որտեղ, ինձ թուաց թէ դարձեալ լսեցի Մարիամիս ճիչը: Ես վա-

*) Ասում է, որ հասան խան սարգարը, հայոց գիւղերը կործանեց, ռումբեր ձգելով նրանց տների մէջ:

գեցի դէպի այն կողմը, որտեղից լսուեց նրա ձայնը, և կայծակի լուսով, որ այդ բոլորէին փայլատակեց, ես տեսայ մի բլուրի ստորոտում երկու ձիաւորներ, որոնք փախցնում էին մի կին: Եղջերուի արագութեամբ ես վազեցի նրանց ետևից, բայց մինչև հասայ բլուրի մօտ, արդէն փոթորիկը դադարել էր, այլևս կայծակը չէր փայլատակում, որպէսզի ես կարողանայի նրա լուսով շարունակել ճանապարհս: Ես մնացի այնտեղ չ'իմանալով ո՞ր կողմը գնալ, կամ արդեօք առաջ գնալ թէ չէ:

«Ես, գրեթէ միանգամայն մերկ, ոտներս վիրաւորուած, յոգնած, յուսահատուած՝ պառկեցի խոնաւ գետնի վրայ: Կամաց-կամաց մարմինս թմրեց և այլևս ոչինչ չհասկացայ, մինչև որ, երբ աչքերս բացի արեգակը փայլում էր վրաս:

«— Այս ի՞նչ երազ էր. մըմնջացի ես. բայց ի՞նչ է պատահել ինձ, ի՞րտեղ եմ ես, ինչպէ՞ս եմ եկել այստեղ: Կամ դեերն են ինձ այստեղ բերել կամ թէ, ես խելագարուել եմ»:

«Ես վերկացայ և կամաց-կամաց քայլեցի դէպի մեր գիւղը: Լոռութիւն էր տիրում ամբողջ գիւղի վրայ: Տեղ-տեղ ծուխ էր բարձրանում: Մոլորուած կովեր, ոչխարներ ու այծեր արածում էին գիւղի դրսերում: Մի քանի ձիաւորներ այս ու այն կողմն էին գնում, կարծես թէ նրանք մի ինչ որ կարևոր գործով զբաղուած էին: Խեղճ, թշուառացած գիւղացիները խմբերով թափթափուած էին միմիանց վրայ. նրանք դեռ չէին սթափուել այն ուշաթափութիւնից որ առաջ էր եկել կորստաբեր աղէտի յանկարծակի նրանց վրայ գալուց:

«Ես կարծում էի որ ծնողներս և բոլոր իմ մերձաւորները սպանուած կը լինեն: Կարծում էի որ մեր տունը մի կատարեալ շեղակոյտ պիտի դարձած լինէր, և ես կը ստիպուէի թափառել աշխարհիս վրայ անտուն, անհայր, անմայր, անազգական: Սակայն ես սխալուել էի, երեակայութիւնս շատ հեռու էր տարել ինձ. որովհետեւ առաջին անձը, որին ես հանդիպեցի մեր գիւղում, խեղճ մայրս էր, որը ինձ տեսնելով՝ փաթաթուեց վզովս, և արտասուքի հեղեղ թափեց վրաս:

Երբ որ նրա վիշտը փարատուեց և քիչ հանգստացաւ, նա ասաց, որ հայրս խիստ տանջուել էր մի վէրքից որ նա ստացել էր իր գլխի վրայ, որ մեր ընտանիքի միւս անդամները ազատուել էին վտանգից, որ մեր տունը բաւականաչափ կործանուել և թալանուել էր, և իմ հարմարարնը բոլորովին աւերուել: Նա յայտնեց նաև, որ մեր բարեկամ ռուս զօրապետն առաջին մարդն էր եղել, որ զոհ էր գնացել պարսիկների կատաղութեանը. որովհետեւ երբ նա ռումբի բռնկման ձայնը լսել էր, նա դուրս էր վազել օգնութեան հասնելու սակայն եր-

կու պարսիկներ յարձակուելով նրա վրայ՝ անողորմաբար գլխատել էին նրան: Այս այն գլուխն էր որ ես տեսել էի այն ժամանակ՝ երբ դուրս էի վազում սենեակիցս:

Պարսիկներն իրանց սոսկալի ոճրագործութիւնը վերջացնելուց յետոյ, քաշուել, գնացել էին մեր գիւղից, թողնելով խեղճ գիւղացիներին թաղելու երեսուն դժբախտ ռուսների մարմինները, որոնք գլխատուել էին նրանցից, և որոնց գլուխները նրանք իրանց հետ տարել էին որպէս աւար:

«Հօրս տեսնելուց և մեր տան համար—մեր ընտանիքի կենցաղի մասին կարգադրութիւններ անելուց յետոյ, ես վճռեցի անմիջապէս հեռանալ իմ հայրական գիւղից, որոնելու իմ հողուս-հատոր կնոջը:

Պարզ էր, որ պարսիկներն առևանգել էին նրան և տարել Նրևան, որովհետև գերիավաճառութեան ամենամօտ բազարն այնտեղ էր գտնուում, կասկած չկար որ կինս տարուել էր այնտեղ վաճառուելու համար:

Վերցնելով, սուրս, ատրճանակներս ու հրացանս, որոնք իմ հարսնարանի զարդերի մի մասն էին կազմում և որոնք թաղուել էին նրա առաստաղից թափուած քարերի տակ, ես մնաս բարով ասացի իմ հայրենի գիւղին և երգուեցի երէք չվերադառնալ այնտեղ մինչև որ գտնէի Մարիամիս:

Հեռացայ գիւղիցը և արագ քայլերով առաջ գնացի դէպի Նրևան: Ճանապարհին հանդիպեցի երկու լաւ զինուած ձիաւորների, որոնք առաջս կտրելով՝ հարցրին թէ ես որտեղ և ի՞նչ նպատակով էի գնում: Ես իսկոյն ծանօթացրի նրանց իմ տխուր պատմութեան հետ, յուսալով նրանցից մի տեղեկութիւն ստանալ կնոջս վիճակի մասին:

Ներանք տուին ինձ իմ ցանկացած տեղեկութիւնը, սակայն այնպիսի վշտացուցիչ խօսքերով՝ որ, սիրտս իսկոյն լցուեց վատ կասկածանքներով: Ես, նրանցից հասկացայ, որ իմ անմեղ, անարատ կինն ընկել էր մի ամենապիղծ հեշտասէր բռնաւորի ձեռքը:

Ներք նրանք ինձ յայտնեցին թէ սարդարը (նրանք սարդարի թիկնապահներիցն էին) ինչ միջոցների էր դիմել հասնելու իր նպատակին—կատարելու իր չար կամքը, ես վշտալից տոնով ասացի.

—Միթէ կարելի է, որ մարդ իր անձնասիրութիւնը այդ ծայրայեղութեանն հասցնի: Միթէ կարելի է, որ մարդու սրտում մոլութիւնն այդ աստիճանին հասնի: Դուք մուսուլմաններդ կարծում էք թէ կինը ստեղծուած է միմիայն ձեռհեշտասիրութեանն յագուելու տալու համար: Միթէ կինն ստեղ-

ծուել է միմիայն սարդարի համար, ինչպէս ինքը կարծում է: Միթէ կինն ստեղծուել է միմիայն մեր առփական կրքերին բաւականութիւն տալու համար: Ո՛չ, նա ստեղծուել է մեզ օգնական, կարեկից ու ցաւակից ընկեր լինելու, և ոչ թէ նրա համար՝ որ դուք էք կարծում:

«Ձիւտորները ծիծաղելով իմ գաղափարի վրայ, ասացին.

— Եթէ դու որոնում ես մէկին, որ արդէն, այս բոլորիս սարդարի կանանոցումն է, դու իզո՛ւր ես քեզ յոգնեցնում: Դու աւելի լաւ կ'անես հէնց այստեղից վերադառնաս տունդ և ամենեին էլ չմտածես այդ բանի մասին: Այո, վերադարձիր, իզո՛ւր մի չարչարիլ քեզ:

«Նրանց այս խօսքերը չյուսահատեցրին ինձ: Ես շարունակեցի ճանապարհս, մըմնջալով. «Միթէ Աստուած, այսքան աղէտ վրաս բերելուց յետոյ, չի գիշանիլ ներելու իմ յանցանքը: Միթէ նա չ'է խղճալու ինձ, և չ'է պարգևելու ինձ այն մխիթարութիւնը, որին ես այսքան կարօտ եմ, և որը միայն կարող է տալ ինքը:

«Ես վերջապէս հասայ Ապարանի մօտ, որտեղ գտնուում էր սարդարի բանակը: Քայլերս ուղղեցի դէպի վրանները, յուսալով մի լուր իմանալ կնոջս մասին: Բանակում մեծ շարժում կար, որովհետեւ հէնց նոր այնտեղ էին հասել մեր գիւղի վրայ յարձակուող պարսիկները, և սարդարի վրանի առջև ի ցոյց դնելով սպանուած ռուսների գլուխները, ապացուցանում էին, իրանց քաջութիւնը, գործունէութիւնը և յաջողութիւնը: Ամբողջ բանակում այնքան մեծ շարժում, ուրախութիւն ու ցընծութիւն կար, որ մարդ կարծում էր պարսիկները մի փառաւոր, մեծ յաղթութիւն էին արել:

«Ջահրհուրիի գլուխներն իսկոյն աղի մէջ տրուեցին և մեծ հանդիսաւորութեամբ ուղարկուեցին Շահին, որը երբէք չէ հաւատում որ իր զօրքերը յաղթել են, մինչև որ իր աչքով չտեսնէ յաղթութեան այս շօշափելի ապացոյցները:

«Այս ուրախութեան միջոցին, մի սուրհանդակ հասաւ ռուսաց սահմանագլխից և յայտնեց, որ ռուսները լսած լինելով որ պարսիկներն յարձակուել են Ղամիշլու գիւղում գտնուող իրանց զինուորների վրայ, մեծ զօրքով գալիս են յարձակուելու սարդարի վրայ, և թէ նրանք այնքան սրարշաւ են գալիս, որ հաւանականաբար արևմտին կը շրջապատեն բանակին:

«Ծնծութիւնն իսկոյն փոխուեց շփոթութեան ու խռովութեան: Աննկարագրելի է թէ ինչ իրարանցում ընկաւ ամբողջ բանակի մէջ: Սարդարն հրամայեց իսկոյն հաւաքել վրանները և փախչել այդ տեղից: Մարդ, ձի, ջորի, ուղտ վրան,—բոլորն